ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3422-Ա « 09 » հուլիսի 2026թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Տիգրան Հակոբյանի լիազորված անձ Հրանտ Մարգարյանի 2026 թվականի հունիսի 10-ի թիվ Դ-59674-26 դիմումով ներկայացված վարչական բողոքի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան իրականացվել է բողոքի քննություն:

2026 թվականի հունիսի 10-ի թիվ Դ-59674-26 դիմումով ներկայացված վարչական բողոքի քննության շրջանակներում 2026 թվականի հունիսի 29-ին հրավիրվել են լսումներ, որի մասին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալի 2026 թվականի հունիսի 19-ի թիվ 07/81491-26 գրությամբ և «margaryan-hrant@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեով պատշաճ ծանուցվել է բողոքաբեր Տիգրան Հակոբյանի լիազորված անձ Հրանտ Մարգարյանը, սակայն վերջինս լսումներին չի ներկայացել:

Ուսումնասիրելով 2026 թվականի հունիսի 10-ի թիվ Դ-59674-26 դիմումով ներկայացված վարչական բողոքը և գնահատելով բողոքի առարկային առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշման կայացման համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/3925/05/23 վարչական գործով 2024 թվականի հունիսի 27-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով (այսուհետ՝ Վճիռ) Տիգրան Հակոբյանի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի բավարարվել է, այն է՝ վճռվել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին հայցվոր Տիգրան Հակոբյանին տրամադրել 2023 թվականի ապրիլի 14-ի դիմումով հայցվող՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Արտեմ Միկոյան փողոցի թիվ 5 շենքի հարևանությամբ Տիգրան Հակոբյանի կողմից կառուցված ինքնակամ շինությունն օրինականացնելու վերաբերյալ օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը՝ բարենպաստ վարչական ակտը:

Ի կատարումն Վճռի պահանջի՝ Երևանի քաղաքապետի կողմից ընդունվել է 2026 թվականի փետրվարի 9-ի N 645-Ա որոշումը, որի 1-ին կետով Արտեմ Միկոյան փողոցի թիվ 5/5 հասցեում գտնվող 82,0քմ ընդհանուր մակերեսով հողամասում կառուցված՝

բնակելի շինություն, ծածկ, գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը համարվել է Երևան քաղաքի սեփականությունը և ճանաչվել է օրինական:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ Ն/6959-26 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Միկոյան փողոցի թիվ 5 շենքի հարևանությամբ գտնվող ինքնակամ շինությամբ ծանրաբեռնված հողամասը Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պայմանական նշաններով ներառված է ընդհանուր օգտագործման գոտում, սակայն, հիմք ընդունելով Վճռի պահանջները, 2026 թվականի փետրվարի 9-ին կայացվել է Երևանի քաղաքապետի «Ինքնակամ կառույցի օրինականացման մասին» N 645-Ա որոշումը:

Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 6-ի N 1737-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետի 2026 թվականի փետրվարի 9-ի N 645-Ա որոշումը ճանաչվել է անվավեր:

Տիգրան Հակոբյանի լիազորված անձ Հրանտ Մարգարյանը 2026 թվականի հունիսի 10-ի թիվ Դ-59674-26 դիմումով խնդրել է ներկայացված վարչական բողոքը բավարարել և վերացնել (անվավեր ճանաչել) Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 6-ի N 1737-Ա որոշումը:

2026 թվականի հունիսի 10-ի թիվ Դ-59674-26 դիմումին կից չեն ներկայացվել վարչական բողոքը հիմնավորող և Երևանի քաղաքապետի 2026 թվականի փետրվարի 9-ի N 645-Ա որոշման անվավերության հիմքում դրված փաստական հանգամանքը, այն է՝ Երևան քաղաքի Միկոյան փողոցի թիվ 5 շենքի հարևանությամբ գտնվող ինքնակամ շինությամբ ծանրաբեռնված հողամասը ընդհանուր օգտագործման հողամաս չհանդիսանալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 2-րդ կետի «բ» ենթակետի կիրառման նախադրյալները բացակայելու վերաբերյալ ապացույցներ:

3. Որոշումն ընդունելու հիմնավորումները.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական բողոքի քննարկումն իրականացվում է նույն օրենքի երկրորդ բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե չորրորդ բաժնով այլ բան նախատեսված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից:

Տիգրան Հակոբյանի լիազորված անձ Հրանտ Մարգարյանը 2026 թվականի հունիսի 10-ի թիվ Դ-59674-26 բողոքի հիմքում դրել է այն փաստական հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի 2026 թվականի փետրվարի 9-ի N 645-Ա որոշումը Տիգրան Հակոբյանը չի ստացել, հետևաբար այն ուժի մեջ մտած չի եղել, ինչպես նաև այն

հանգամանքները, որ Վճռի պահանջները չեն կատարվել և Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 6-ի N 1737-Ա որոշումը հակասում է Վճռին ու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի մի շարք իրավանորմերի պահանջներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա/ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

բ/ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ Ն/6959-26 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Միկոյան փողոցի թիվ 5 շենքի հարևանությամբ գտնվող ինքնակամ շինությամբ ծանրաբեռնված հողամասը Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պայմանական նշաններով ներառված է ընդհանուր օգտագործման գոտում:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ):

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները, որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում.

գ) շահերի բախման իրավիճակում:

2026 թվականի հունիսի 10-ի թիվ Դ-59674-26 վարչական բողոքով բողոքաբերը չի հիմնավորել Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 6-ի N 1737-Ա որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմքով անվավեր ճանաչման ենթակա լինելու փաստական հանգամանքը, չի ներկայացրել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ Ն/6959-26 գրության մեջ նշված փաստական հանգամանքն ու Երևան քաղաքի Միկոյան փողոցի թիվ 5 շենքի հարևանությամբ գտնվող ինքնակամ շինության օրինականացման իրավական հնարավորությունը բացառող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված նախադրյալների առկայությունը հերքող ապացույցներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ.

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ Ն/6959-26 գրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ, 43-րդ, 69-րդ, 75-րդ հոդվածներով և նույն օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Երևանի քաղաքապետարան հասցեագրված՝ Տիգրան Հակոբյանի լիազորված անձ Հրանտ Մարգարյանի 2026 թվականի հունիսի 10-ի թիվ Դ-59674-26 դիմումով ներկայացված վարչական բողոքը մերժել և Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 6-ի N 1737-Ա որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246